4. ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ

(ԾԵՐԵՆՑ)

(1822-1888)

Ե. Օտեան, - Յովսէփ Շիշմանեան, Մասիս 1893, էջ 387-390:

Լէօ, - Ռուսահայոց գրականութիւնը, 1904, էջ 261-278:

Վ. Փափազեան, - Պատմ. Հայոց գրակ. 1911, էջ 474-480

Գրիչ, - Թորոս Լևոնի, Փորձ 1879, փետր. էջ 126-145:

Գեղամեանց – Ծերենցի Երկունք Թ, դարու, Փորձ 1880, օգ. էջ 199-225:

* * * - Ծերենց, Աղբիւր 1895, էջ 42-44:

Յովսէփ Շիշմանեանը կաթոլիկ ծնողների զաւակ էր, ծնուել է 1822թ. Սեպտ. 16-ին Պոլսում: 10 տարեկան հասակում նա գնում է Վենետիկի Մխիթարեանց վանքը՝ ուսում առնելու համար. 1837-ին աւարտում է ուսումը, բայց իր եռանդուն սրտի առաջ շատ նեղ գտնելով վանքի շրջապատը, մերժում է ընդունել կրօնաւորական սքեմը և վերադառնում է Պոլիս, ուր սկսում է պարապել ուսուցչութեամբ:

Մխիթարեանների հասցրած բոլոր աշակերտների նման՝ Շիշմանեանն էլ վառուած էր ազգի ու հայրենիքի սիրով: Բայց նա միւսների նման չի բաւականանում մի երևակայական ու անծանօթ աշխարհ ունենալով իր մտքի մէջ, այլ ցանկանում է անձամբ տեսնել և ուսումնասիրել Հայաստանը, հայ ժողովրդի կացութիւնը, նորա կարիքներն ու ցաւերը: Այս նպատակով՝ 1843 թուին՝ մի տարի ամբողջ ճանապարհորդում է Հայաստանի զանազան կողմերը և Թիֆլիսի վերայով վերադառնում է Պոլիս: Նիւթականից զուրկ՝ նա նորից սկսում է այստեղ պարապել ուսուցչութեամբ, մի ժամանակ լինում է դեղագործի աշակերտ, և վերջապէս 1848-ին յաջողում է գնալ Պարիզ՝ բժշկություն սովորելու համար:

Պարիզում Շիշմանեանը մի կողմից յաճախում է համալսարան և միւս կողմից՝ նիւթական ապրուստ հայթհայթելու համար՝ դասեր է տալիս Մուրատեան վարժարանում: Նա խառնւում է նորահաս հայ երիտասարդների այն աշխույժ խմբի մէջ, որ պիտի ծնէր յետոյ Տաճկահայ սահմանադրութիւնը: Առանձնապէս ընկերանում է Ռուսինեանին ու Նիկողոս Պալեանին: Միասին գնում են լսելու Հիւգոյի, Միշլէի, Լամարտինի, Վ. Կուզէնի և ուրիշ աշխարհահռչակ գործիչների ճառերը, որոնց ողջամիտ գաղափարներով համակւում են իրանք էլ:

1853 թ. Շիշմանեանը աւարտեց իր ուսումը և վերադարձաւ Պոլիս: Բայց փոխանակ շահադիտութեամբ ոսկի դիզելու հետամտելու, ամբողջ հոգով նետուեց ազգային գործերի մէջ և իր անշահախնդիր բնաւորութեամբ, մաքրութեամբ ու անկեղծութեամբ՝ քիչ ժամանակից ձեռք բերաւ ազնիւ գործիչի համբաւը: Ազգային շահը ամէնից բարձր էր նրա համար. Նրան պէտք էր զոհել ամէն ինչ:

Մենք գիտենք թէ ինչպիսի եռանդուն գործունէութիւն էր սկսուած այն ժամանակ Հայոց մէջ՝ վարչական ազատագրութիւն ձեռք բերելու, կղերի և ազնուականութեան ձայնը իջեցնելով՝ ժողովրդի ձայնը բարձրացնելու, արհամարհուած աշխահաբարը գրական լեզուի աստիճանին հասցնելու և այլ նման նպատակների համար: Շիշմանեանը՝ իբրև կաթոլիկ, չէր կարող մասնակցել մեր պատրիարքարանի վարչական գործերին: Բայց Հայ-կաթոլիկ հասարակութիւնն էլ նոյն ժամանակ ունէր ներքին վարչական ազատագրութեան վէճեր, մանաւանդ Հասունեան և Հակահասունեան վէճը, որ հայ ազգայնութեան լինել-չլինելու հարցն էր հայ-կաթոլիկ համայնքի մէջ: Շիշմանեանը՝ Պէշիկթաշլեանի հետ, եռանդուն կերպով մասնակցեցաւ այս վէճերին, ինչ դեր որ խաղում էր Ռուսինեանը մեր պատրիարքարանի մեջ, նոյն դերը խաղում էր Շիշմանեանը հայ-կաթոլիկ պատրիարքարանում: Նա եղաւ պարագլուխ Հակահասունեան կուսակցութեան և սերանով բնականաբար սաստիկ գրգռեց Հասունեաններին իր դէմ: Պէշիկթալեանի և Օտեանի հետ նա գործօն մասնակցութիւն ունեցաւ Բարեգործական ընկերութեան մէջ, որ հիմնուել էր Համազգեաց ընկերութեան փոխարէն և նպատակ ունէր գիտական երկրագործութիւնը տարածելով Հայոց մէջ՝ պատրաստել գիտութեամբ լուսաւորուած ու տնտեսապէս զարգացած ժողովուրդ:

Գործը պէտք է սկսուէր Կիլիկիայից: Որոշուեցաւ գնել Կիլիկիայում մեծ քանակութեամբ հողեր, հիմնել նրանց վրայ հայ գաղթականութիւն և երկրագործական դպրոց: Շիշմանեանը գնաց Կիլիկիա՝ ուսումնասիրելու համար այս գործը: Հասունեանները իսկոյն ամբաստանեցին տէրութեան առաջ թէ Շիշմանեանը գնացել է յեղափոխութիւն քարոզելու, ուստի նա ստիպուեց Պոլիս վերադառնալ (1863) և ընկերութիւնն էլ քայքայուեց:

Շիշմանեանը սակայն չընկճուեց, ընդհակառակը նա աւելի մեծ եռանդով կռուում էր իր հակառակորդների դէմ գրչով ու լեզուով: Նոյն ժամանակ բացուել էր Օրթագիւղի լսարանը: Շիշմանեանը նրա եռանդուն ճառախօսներից մէկն է դառնում, միւս կողմից շարունակ գրում է Ծերենց ծածկանունով՝ Մասիս, Արևելեան Մամուլ և Ծիածան թերթերում, պաշտպանելով ազգային հարցերը, ժողովուրդին դաստիարակելով լուսաւորութեան և ազատութեան ճանապարհի մէջ: Վերջապէս կառավարութիւնը կասկածելով նրանից՝ կառավարական բժշկի պաշտօնով քշում է նրան Կիպրոս կղզին (1875):

Երեք տարի մնաց Շիշմանեանը Կիպրոսում, իրեն ընկեր ունենալով միայն իր գրագէտ աղջիկը՝ որի համար անհուն կաթոգին սէր ունէր: Այդտեղ՝ այդ առանձնութեան մէջ՝ հայր և դուստր սկսան պարապել գրականութեամբ: Այդտեղ գրեց Ծերենցը իր *Թորոս Լևոնի* պատմական վէպը (տպ. Պոլիս 1878), որ մեծ ընդունելութիւն գտաւ ժողովրդի կողմից և քաջալերեց հեղինակին շարունակելու իր սկսած գործը և հրատարակելու երկու նոր վէպեր էլ՝ *Երկունք Թ. Դարու* և *Թէոդորոս Ռշտունի*:

1878-ին Շիշմանեանը դարձաւ Պոլիս, այս ժամանակ է որ նա զգալով հայ ազգութեան մեծամասնութիւնից անջատ լինելու անպատեհութիւնները՝ վերադարձաւ հայ եկեղեցու ծոցը: Կարճ ժամանակ մնալով Պոլսում՝ Ծերենցը անցաւ Թիֆլիս, ուր Ներսիսեան դպրոցում Հայոց պատմութեան ուսուցիչ կարգուեցաւ: Ռուսահայերը սիրեցին այս ազնիւ մարդուն, որ մի տեսակ կապ դարձաւ հայութեան երկու անջատ մարմինների մէջտեղ: Թիֆլիսում Ծերենցը ամուսնացնելով իր աղջկան, սկսաւ վարել թափառական կեանք: Ռուս-Տաճկական պատերազմից յետոյ՝ 1879-ին, երբ Հայաստանի մէջ ճարակում էր ահռելի սովը, Ծերենցը գնաց Տաճկահայաստան և Խրիմեանի հետ օգնում էր կարօտեալներին: Յետոյ իւրաքանչիւր տարի

ճանապարհորդում էր Պոլիս, Թիֆլիս, Պարիզ: 1884-ին վախճանուեց Ծերենցի սիրելի դուստրը Թիֆլիսում, այդ կորուստը այնպիսի ահագին ազդեցութիւն ունեցաւ ծերունի հօր վերայ, որ նա շուտով կաթուածահար եղաւ և շատ չանցած վախճանուեց Թիֆլիսում (1888 փետր. 17):

Ծերենցը նշանաւոր է մեր գրականութեան պատմութեան մէջ իր վէպերով, գրական միւս սեռերին պատկանող նրա գործերը, հրապարակախօսութիւններն ու ճառերը այժմ արդէն մոռացուած են: Սրանց մէջ պէտք է յիշել *Հաւաքումն հրատարակութեանց (Պոլիս 1870), Ցնորք եւ երեւակայութիւն Յ. Շիշմանեանի (Պոլիս 1873) և Եւրոպական քաղաքականութեան ներկայ ժամանակներուս հայ ազգին վրայ ըրած ազդեցութիւնը (Պոլիս 1873):* Վերջինը մի բանախօսութիւն է՝ որ հեղինակը արել է 1873-ին Օրթագիւղի լսարանում, և նպատակ ունի ներկայացնելու եւրոպական քաղաքակրթութեան կատարած դերը հայ ազգային կեանքի մէջ. քննում է կաթոլիկ և բողոքական հայերի բաժանումը մեր եկեղեցուց: Այս բաժանումը նա գտնում է օգտակար, որովհետև «հայ կրօնաւորք որ գիրքին կողը միայն կը ցուցնէին, սկսան մէջն ալ կարդալ»: Այսպէսով՝ կրօնական վէճերի պատճառով՝ ազատ խօսքը սկսաւ, ուսումնասիրութեան, գրական քննութիւնների եռանդը արծարծուեցաւ, դպրոցներ բացուեցան և ուսումը տարածուել սկսաւ:

Ծերենցը, ինչպէս ասացինք, ունի երեք պատմական վէպ. *Թորոս Լեւոնի, Երկունք Թ. դարու և Թէոդորոս Ռշտունի:*

Թորոս Լեւոնի (Պոլիս 1878. երկրորդ տպագրութիւնը արգելուեց Պոլսում) ներկայացնում է Թորոս Բ-ի ապստամբութիւնը Յունաց դէմ և Ռուբինեանց իշխանութեան վերականգնումը՝ որ Լևոն Ա-ի գերութեամբ կործանուել էր: Յոյները Լեւոնին՝ իր երկու որդիների՝ Ռուբէնի և Թորոսի հետ Պոլիս են տանում ու բանտարկում: Նոյն ժամանակ Պոլսում ազդեցիկ դիրք ունէր Եւփիմէ իշխանուհին՝ որ Փոքր Հայոց յոյն կուսակալի աղջիկն էր. Եւփիմէի մայրը՝ Արծրունի ցեղից մի իշխանուհի, այնպէս էր կրթել իր աղջկան, որ նա իրան զգում էր անարատ հայ, ատում էր յոյներին և յոյն ազնուականութեան մէջ տիրող ապականեալ կեանքից բոլորովին հեռու էր: Հայ իշխանները ազատում են բանտից. Եւփիմէն սիրում է Ռուբէնին. յոյները կասկածելով Ռուբէնի վրայ, սպանում են, Լևոնը չի դիմանում այս ցաւին ու մեռնում է: Խոհեմ ու քաջ Թորոսը՝ իր ազատութիւնը ձեռք բերելու համար, ապուշ է ձևանում և այսպէսով յաջողում է ցրուել իր վրայ եղած կասկածները: Եւփիմէն՝ որ իր սիրելու մահուան վրայ, յետին յուսահատութեան էր մատնուած, տեսնում է Ռուբէնին չափազանց նման Թորոսին և իր սիրելուն նրա մէջ վերակենդանացած համարելով՝ սիրում է նրան: Եւփիմէն գաղտնի միջոցներով յաջողեց Թորոսին փոխադրել մի պալատ, որ գաղտնի անցքով հաղորդակցում էր իր պալատի հետ: Այնտեղ Թորոս գտաւ ամէն խնամք ու հոգատարութիւն և մինչդեռ զարմացած՝ ճգնում էր գտնել իր անծանօթ բարերարին, յանկարծ բացւում է գաղտնի անցքը և երևան է գալիս Եւփիմէն: Թորոսը ամէն գաղտնիք իմանում է նրանից և տեսնելով նրա մէջ հայութեան նուիրուած մի չքնաղ իշխանուհու տիպարը՝ սիրում է նրան ու մի հայ քահանայի ձեռքով պսակւում:

Նրանք որոշում են փախչել Կիլիկիա և Ռուբինեանց իշխանութիւնը վերականգնել:

Եւփիմէի հայրը մեռել էր, մահուան ժամանակ նա միակ աղջկայ խնամքը յանձնել էր իր ընտիր բարեկամ՝ Դիոնիս յոյն բժշկին: Թորոսն էլ ունէր մի հին ծառայ՝ Բարկէն անունով, որ անձնուիրութեան ու հաւատարմութեան ամենագեղեցիկ տիպարն է, զուտ ժողովրդական մի դէմք, որ գիշեր ցերեկ անքուն հսկում է իր երիտասարդ տիրոջ պահպանութեան համար:

Չորսը միասին նաւով փախչում են Պոլիս և խուսափելու համար յոյների հետապնդումներից՝ անցնում են Կիպրոս, ուր գտնում են իրենց հին բարեկամ Կոստանդինին և ծովահէն Սարգիսին: Սարգիսը գնում է Կիլիկիա, պատրաստում է անձնուէր հայ մարտիկների մի խումբ, անծանօթ տեղեր թագցնում է պաշար, և Կիպրոս վերադառնալով՝ առաջնորդում է փախստականներին դէպի Կիլիկիոյ եզերքը: Մութ գիշերին, ամէնքից գաղտնի, լրտես յոյն նաւերից ու ծովահէններից խուսափելով՝ մեր փոքրիկ խումբը ցամաք է դուրս գալիս: Սարգսի մարտիկները դիմաւորում են նրանց: Եւ այնտեղ, ծովափի վրայ, իրենց վաղուց կորցրած սիրելի իշխանի առջև, ձեռքերը երկինք պարզած երդւում են մեռնել յանուն Հայրենիքի ու Թորոսի:

Փոքրիկ խումբը ճանապարհ է ընկնում և ափափայ ու անծանօթ տեղերից անցնելով՝ մօտենում է Վահկային: Թորոսը նախ գրաւում է Ամուտայ բերդը և այնտեղ բարձրացնում առաջին անգամ հայկական դրօշակը, իրեն իշխան հրատարակում: Ամէն կողմից ժողովուրդը դիմում է գունդագունդ Թորոսի մօտ: Նա արագութեամբ տիրում է Վահկային, Մամեստիային, ջարդում Տարսոնի յունական բանակը և վերջապէս արշաւում Անարզաբային վրայ: Այս քաղաքը յունահպատակ Սմբատ իշխանի ձեռքն էր: Արևելեան բռնակալութեան ամենագազանային տիպարն էր Սմբատը. իր լպիրշ կնոջ և նորա արբանեակ եպիսկոպոսի հետ տանջում, քամում էր հայ ժողովրդի արիւնը, պալատում սիրում էր ապականութիւնը, աւեր, զրկանք, հարստահարութիւն, լրտեսութիւն, կաշառք ու անարդար դատաստաններ նահատակել էին թշուառ ժողովրդին: Այդ ընդհանուր ապականութեան մէջ մի անարատ գոհար միայն կար, դա Սմբատի աղջիկը՝ Մարգարիտն էր: Մաքուր, պարկեշտ, ողորմած, բարեսէր այդ աղջիկը, դեղերի տուփը փեռքին, ման էր գալիս գիւղից գիւղ, հիւանդներին դարմանում, նոցա վէրքերին սպեղանի դնում, աղքատներին նիւթական օգնութիւն հասցնում:

Թորոսը պաշարեց Անարզաբան. գոռոզ Սմբատի համար ծանր էր հպատակուել նորելուկ իշխանին. նա վճռեց մինչև վերջին շունչը դիմադրել, բայց զօրքը նրան չէր լսում. ժողովուրդը բարձրացրել էր ընդհանուր ապստամբութիւն և պահանջում էր որ բերդի դռները բացուին. պալատը տակնուվրայ էր եղել. յուսահատ Սմբատը դաշոյնը իր սիրտն է խրում. ժողովուրդը յարձակւում է պալատի վրայ և ուզում է թագուհուն ու եպիսկոպոսին յոշոտել: Այստեղ երևան է գալիս առաքինութեան յաղթանակը: Մարգարիտը գազանացած խուժանի առաջն է ելնում, նրա տկար ձայնի առաջ լռում են ահարկու գոչիւնները. նրան են յանձնում իշխանական գահը և Մարգարիտը՝ Թորոսի հետ բանակցելով՝ քաղաքը յանձնում է: Այսպէսով Թորոսը Կիլիկիոյ տէր է դառնում: Նա երկիրը կարգաւորում է յունական քաղաքակրթութեամբ, հայրաբար կառավարում, անարդարութիւնը լռեցնում: Այնուհետև պատմւում է Անդրոնիկոսի կռիւը, Կիպրոսի արշաւանքը Թորոսի դէմ և նրա հետ հաշտուելը, Ստեփանէի մահը յունաց ձեռքով, Մլեհի ու Թորոսի վրէժխնդրութիւնը, Լամբրոնի կռիւները, Մլեհի դաւադրութիւնը, Անդրոնիկոսի վերջին արշաւանքը և Թորոսի մահը:

Երկունք Թ. դարու (Տփխիս 1879) արաբական տիրապետութեան վերջին ժամանակներից առնուած մի վէպ է, որի գլխաւոր հերոսն է Սասունցի Յովնանը: Յովնանը մի հասարակ գիւղացի էր, բնական ձիրքերով, խելքով ու քաջութեամբ օժտուած մի մարդ: Փոքր տարիքից նա ծառայութեան էր մտել Տարօնի Բագրատունեաց պալատում: Իշխանի աղջիկը Վասկանուշ և Յովնան սիրում են իրար, ազնուապետական ըմբռնումների համար ահռելի այդ յանցանքը լսում է իշխանը, Յովնանին բանտարկում, իսկ Վասկանուշին կուսանաց վանքն է ուղարկում, Յովնանը փախչում է բանտից ու Սասնոյ լեռները քաշւում, ուր ռամկավարական սկզբունքներով

կառավարում էր ժողովուրդը: Ամբողջ Սասունը սուրբի պէս պաշտում էր այդ ազնիւ ու քաջ գիւղապետին:

851 թուի ձմեռն էր. Արաբները ամբողջ Հայաստանը աւերել, Բագարատ իշխանին մորթել էին, ամէն մարդ սոսկումով համակուած չգիտէր ինչ անել: Յանկարծ Յովնանը Սասնցոց գլուխն է անցնում, արշաւում Մուշ, արաբներին ջարդում և ոստիկանին սպանում է:

Յովնանին ընկերանում է մի նոր երիտասարդ՝ Գուրգէն Արծրունի, որ Յովնանի նման սիրոյ զոհ է: Նա սիրում է Ռշտունեաց օրիորդ Հեղինէին, ազգականները զրկեցին նրան հայրենի ժառանգութիւնից, Գուրգէնը անցաւ Յունաց ծառայութեան, իր քաջութեամբ ստացաւ Թորթումը և այժմ՝ երկար տարիների բացակայութիւնից հետոյ՝ գնում է Ռշտունեաց ոստանը՝ իր սրտի հատորին գտնելու: Հասաւ ամրոցը: Կայծակ իջաւ Գուրգէնի գլխին, որբ լսեց թէ Հեղինէն՝ այնքան տարի սպասելուց յետոյ՝ խաբուելով ամուսնացել է Մուշեղի հետ: Ի՞նչ անել այժմ: Պէտք է տեսնել սիրադրուժ օրիորդին: Գուրգէնը գնում է Կանգուար, ուր իր քաջութեամբ ազատելով Մուշեղին քրդերի յանկարծական յարձակումից, առիթ է ունենում հիւրասիրուելու ամրոցում: Վաղեմի սիրահարները գտնում են իրար, բացւում է գաղտնիքը, թէ ինչպէս չարամիտները յերիւրել էին Գուրգէնի անունից մի նամակ, որով իբր թէ նա մերժում էր Հեղինէի սէրը և ամուսնանում ուրշի հետ: Հեղինէի սէրը կենդանի է դեռ, բայց իբրև առաքինի կին, նա միայն իր ամուսնուն է պատկանում, նա հեռացնում է Գուրգէնին՝ պահանջելով նրանից իր ամբողջ սէրը նուիրել հայրենիքին, այսուհետև նրա բարի անունը միայն պիտի լինի թշուառ Հեղինէի սփոփանքը:

Յովնանը գիտէր որ արաբները չէն կարող իրենց վրէժը մոռանալ, ուստի գնում է Դուին, ներկայանում կաթողիկոսի և նախարարների ժողովին, առաջարկում է պատրաստուել, միանալ Սասնցոց հետ և ընդհանուր ուժերով դէմ գնել թշնամուն: Նախարարները կատաղում են՝ երբ տեսնում են որ մի հասարակ գիւղացի համարձակւում է իրենց խորհուրդներ տալ: Վռնտում են նրան ու բանտարկում: Աշոտ ինխանը թաքուն արձակում է նրան:

Յովնանը տեսնելով որ իր յոյսերը ի գերևելան, քաշւում է Սասուն, ամրացնում, ժողովրդին ամէն կերպով զինում, պատրաստում: Շարժւում է Բուղայի ահարկու բանակը ուղղակի Սասուն, բայց Յովնանը իր կատաղի յարձակումներով շարունակ վանում է նրան. Բուղան թողնելով Սասունը, արշաւում է անտէր Հայաստանի զանազան կողմերը, երկիրը արիւնով լուանում: Յովնանը դուրս է գալիս Սասունից, յարձակւում մօտակայ գաւառները, արաբներին կոտորում, գերիներին փրկում, թշուառներին պահապան հրեշտակ հանդիսանում: Նա ձերբակալում է նաև երեք մատնիչ նախարարներ, մի ընդարձակ դատաստանի մէջ մահուան վճիռ արձակել տալիս և ինքը անձամբ կախաղան է բարձրացնում նրանց՝ Դուինի մէջ՝ Բուղայի քթի տակ:

Ճորոխի ափերի վրայ մի կուսանաց վանք կար, որի մայրապետն էր Վասկանուշ: Դա այն թշուառ ազնուական օրորդն էր, որ համարձակուել էր սիրել ժողովրդի զաւակ Յովնանին և իբր պատիժ դատապարտուել էր վանքը մտնելու: Նա ոչ միայն բանամայր էր, այլ և շրջակայ գաւառի պահապան հրեշտակը, որին բոլորը՝ մեծ ու փոքր, սիրում գուրգուրում էին: Արաբները յարձակուեցան նաև այստեղ, Յովնանի խումբը հասաւ ու վանեց թշնամին: Վասկանուշը՝ իբրև շնորհակալութիւն՝ խնջոյք տուաւ հայ բանակին՝ վանքում: Այստեղ՝ Վասկանուշ ու Յովնան գտան իրար: 27 տարի էր անցել և այդքան ժամանակ նոքա անմոռաց պահել էին սրտում իրենց մաքուր, սուրբ, անարատ սէրը: Նոքա մի մի մշտավառ բուրվառ էին դարձել իրենց սրտերը և մի

Աստուծոյ, միւսը հայրենիքին նուիրուած՝ մխում էին անտրտունջ: Յովնանը հրաժարուել էր գինուց ու զուարճութիւններից և ամէն տարի գալիս էր այդ վանքի առաջ, ծնկաչոք դիտելու պարսպի վրայ շարժուող սիրելի ստուերն ու հեռանալու:

Բուղայի արշաւանքի առաջն առնելու համար՝ առանջին քաղաքականութեան է հետևում Սմբատ Բագրատունին. նա կարծում է որ նրան սիրաշահելով, նրա բոլոր պահանջները կատարելով, կարող է նրա զայրոյթը մեղմել, և այսպէսով դառնում է ակամայ մատնիչ: Յովնանը գնում է Սմբատի մօտ, յորդորելու որ ետ կենայ այս դաւաճանութիւնից և ժողովրդի գլուխն անցնելով՝ Բուղայի դէմ կանգնի: Բայց իզուր: Երբ Յովնանը յետ էր դառնում, յանկարծ պաշարուեց արաբների խմբից, բռնուեց ու Բուղայի հրամանով գլխատուեց: Վասկանուշը թաղեց նահատակի մարմինը մի մատուռի մէջ, որի մօտ քիչ ժամանակից գնաց հանգչելու ինքն էլ: Ամէնքը յարգում էին այս երկու շիրիմները, մէկի քաջութիւնը, միւսի ողորմածութիւնը գովելով. «բայց ո՞վ գիտէր և ո՞վ էր համրեր այն անթիւ արցունքներն ու հառաչանքները այդ երկու անձանց, որ տարիներով բաժանուած՝ վերջապէս գերեզմանին քով իրարու մօտ կը հանգչէին...»:

Յովնանի խմբի մէջ Գուրգէնի հետ կար նաև մի ուրիշ դժբախտ իշխան, դա Խոսրովն էր, որի փոքրիկ աղջիկը՝ Արիգան՝ գերի էր ընկել արաբների ձեռքը, ծերունի հայրը սարէ սար ընկած՝ նրան էր փնտռում: Գուրգէն ու Խոսրով մի գիշեր գտնում են նրան մի արաբ իշխանուհու բերդում, մի խումբ ուրիշ ստրուկ աղջիկների հետ: Բերդը աւերում ու բոլորին էլ ազատում են: Գուրգէնը դեռ շարունակում է իր քաջագործութիւնները, բայց վերջապէս նոյն արաբ իշխանուհուց բռնուելով բանտարկւում է: Խոսրով ու Հեղինէ միացան ու յանկարծական յարձակումով՝ ազատեցին նրան: Քիչ ժամանակից մեռաւ Մուշեղը և երկու սիրահարների՝ Գուրգէնի ու Հեղինէի սէրը օրհնուեց:

Թէոդորոս Ռշտունի (Տփխիս 1881) արաբական արշաւանքների առաջին շրջանից առնուած վէպ է: Սկզբում նկարագրւում է Վարդանաբերդը՝ որ Մամիկոնեանների պալատն է. այստեղ են վէպի բոլոր գլխաւոր հերոսները՝ Թէոդորոս Ռշտունեաց նախարարը, Սուրէն իշխան, Զաւէն անձնապահապետ և Գրիգոր Մամիկոնեան: Յանկարծ լուր է հասնում թէ արաբները յարձակուել են Հայաստան. Թէոդորոսը գնում է Վաղարշակերտի յոյն բանակը, խնդրելու Պրոկոպիոս զօրավարից՝ որ շարժուի արաբների դէմ: Ամբարտաւան յոյնը բարկանում է Թէոդորոսի վրայ և դուրս վռնդում: Թէոդորոսը իր սակաւաւոր ուժերով գնում է արաբների դէմ, որ բազմաթիւ խմբերի բաժանուած՝ աւերում էին Հայաստանի այլևայլ կողմերը: Արաբները յարձակուեցան նաև անպատրաստ Պրոկոպիոսի վրայ ու չարաչար յաղթեցին: Մի ուրիշ խումբ գրաւեց Վարդանաբերդը ու բնակիչներին կոտորեց. Մամիկոնեան Բիւրեղ տիկինը արաբների ձեռքը չընկնելու համար՝ իր աղջկան՝ Նազենիկին փաթաթուած՝ լիճը նետուեց: Սուրէն ու Գրիգոր մեծ դիմադրութիւն ցոյց տուին արաբներին, բայց վերջապէս բանտում բանտարկուեցան: Զաւէնին յաջողուեց ազատել Բիւրեղի փոքր աղջկան՝ Արփենիին, բայց սա էլ ընկաւ Թովմա յոյն զօրավարի ճանկը, որ թաքնաբար փախցրեց նրան Պոլիս, այնտեղ իր պալատում մեծացնելու և իբրը հոմանուհի կայսեր որդուն ընծայելու համար: Չորս տարի ամէն տեղ իզուր որոնելուց յետոյ, Զաւէնը վերջապէս գտաւ Արփենիին Պոլսում և մի օր՝ օգուտ քաղելով ժողովրդական յարձակումից, փախցրեց նրան Հայաստան:

Սուրէն և Գրիգոր երկար չարչարուեցան շէյխի բանտում, ուր իրենց ընկեր ունէին նաև Գազրիկ անունով մի գիւղացի: Վերջապէս որոշեցին առ երեսս ուրանալ իրենց հաւատքը և ազատուեցին: Նրանք թաքնաբար մտան շէյխի պալատը, ձի, զէնք ու ոսկի գողացան, պալատը

կրակի տուին ու փախան դէպի Հայաստան: Ասորոց երկրի մօտ պատահեցին մի արաբ աւազակախմբի, որոնց թէև յաջողութեամբ դիմադրեցին, բայց իրենք էլ ստիպուեցան իրարից բաժանուել: Գրիգոր ու Գազրիկ գնացին Մուշ, ուր գտան Զաւէնին և յետոյ անցան Ոստան, այստեղ գտաւ Գրիգորը իր սիրելի Թենիին՝ Թէոդորոսի աղջկանը, որին մանկութիւնից էր սիրում: Յոյները Թէոդորոսին գերի տարին Պոլիս, ուր նա մասնակցելով պալատական յեղափոխութեան՝ իբր պարգև ստացաւ իր ազատութիւնը: Տեսնելով թէ յունաց ու պարսից տէրութիւնը այնքան թուլացել է որ մուրացիկ թափառական արաբն անգամ կարողացաւ նրանց նուաճել ու արագօրէն մեծանալ, մտածեց ինքն էլ միացնել հայոց, վրաց, աղուանից ու սիւնեաց նախարարներին, քշել նորեկ արաբներին և կազմել մի անկախ տէրութիւն: Իրեն միացան Վարազտիրոց իշխանը և Սուրէն, որ իր ընկերներից բաժանուելով ընկել էր Մարտայիթ ասորիների երկիրը և այնտեղ այնպիսի քաջութիւններ էր գործել, որ Մարտայիթները ուզում էին նրան բռնի ամուսնացնել իրենց Քահինա իշխանուհու հետ և ընտրել իրենց թագաւոր: Սուրէնը մի սուտ ամուսնութիւն կեղծելով Քահինու հետ, կազմում է Կիլիկոյ հայերից մի գունդ և մէկ օր էլ իր խմբով փախչելով Ասորիքից, ծառայում է Կեսարիոյ ապստամբ հայ իշխանի մօտ, այնտեղից էլ մտնում Հայաստան: Թենի և Գրիգոր ամուսնանում են, իսկ Թէոդորոսի մտադրութիւնը յաջողութիւն չի ունենում և վերջապէս մեռնում է այդ մեծ մարդը՝ առանց իր սուրբ նպատակին հասնելու:

Ծերենցը իւր այս վէպով հիմք է դնում մեր մէջ պատմական վիպասանութեան: Ճշմարիտ է որ նրանից 30 տարի առաջ ունեցել ենք Թաղիադեանի *Վարդգէսի վէպը* և *Վէպ Վարսենկանը*, բայց այս երկուսն էլ, ինչպէս տեսանք, աւելի շուտ ռոմաններ են կամ մշակուած հէքիաթ, քան պատմական վէպ: Չենք յիշում ուրիշ երկրորդական գրողների փորձերը, որոնք գրական արժանիքից զուրկ են:

Ծերենցի վէպերը միտումաւոր գրուածքներ են: Հրատարակելով հէնց այն ժամանակ՝ երբ Հայկական հարցը Եւրոպական դիւանագիտութեան առաջ էր բարձրացել, հեղինակը նպատակ ունէր զարթեցնել ազգային զգացմունքերը և թերևս ուղեցոյց հանդիսանալ: Այս պատճառով էլ նա ընտրել է պատմութեան այն շրջանները, երբ ազգը իր անկախութեան մէջ ընկած, հնարք էր որոնում իր անկախութիւնը նորից ձեռք բերելու:

Իր վէպերի մէջ Ծերենցը երևան է հանում իր հայեցակէտները մեր հին պատմութեան իմաստասիրութեան նկատմամբ և հնի օրինակով՝ նաև մեր նոր վարչական կազմակերպութեան ծրագիրն է տալիս: Ամէնից առաջ երևում է նրա ժողովրդասիրութիւնը: Հին Հայոց քաղաքական կեանքի տկարութեան գլխաւոր պատճառը անզուապետական կազմակերպութիւնն էր, ուր ռամիկը բնաւ մասնակցութիւն չունէր, ամէն բան կենտրոնացած էր նախարարների ձեռքը և ոչ թէ արժանիքն էր գնահատւում, այլ ծագումը: Նախարարների ներքին կռիւները թոյլ չէին տալիս մի ընդհանուր միութիւն կազմելու և ժողովուրդը՝ որ սեփական ձայնից զուրկ ստրուկ էր միայն, խաղալիք էր դարձել նոցա ձեռքին: Ծերենցը սխալ է գտնում այն տարածուած կարծիքը թէ հայերը անմիաբան են և մեր բոլոր դժբախտութիւնը ծագում է միայն անմիաբանութիւնից: Մենք 25-ամեայ Պելոպոնէսեան պատերազմներ չունեցանք, ասում է Ծերենցը: Մենք անմիաբան չէինք, մենք անիշխան էինք, հարիւրաւոր իշխողներ ունենալը նշանակում է ոչ մի իշխող չունենալ: «Եթէ մեր այդ յիմար նախարարական և ազնուապետական կառավարութեան ձևը չունենայինք, որ մեր ազգը հարիւր կտոր ընելով, բիւր բռնաւորաց գերի է ըրեր», եթէ Յովնանի պէս կարէնայինք ըսել թէ «այս լեռներուն մէջ ոչ իշխան կայ, ոչ նախարար, ոչ ազնուական, ոչ ազատ, բայց և ոչ մի

ծառայ և մի գերի», եթէ ազգը լինէր «մի հօտ և մի հովիւ», այն ժամանակ նա կունենար իր ներքին զօրութիւնը, որով արտաքին թշնամիների առաջ պատկառելի կը դառնար:

Բայց այս խօսքերով պէտք չէ կարծել որ Ծերենցը զուտ ռամկապետական է, ընդհակառակը նա կողմնակից է իշխանութեան կենտրոնացման և ուժեղացման, միայն պահանջելով ժողովրդի կատարեալ հաւասարութիւնը: Ինչի՞ցն է որ նոյն մեր հայ կեանքի մէջ, մինչդեռ մէկ կողմից տեսնում ենք քաղաքական իշխանութեան թուլութիւնն ու անկումը, միւս կողմից էլ տեսնում ենք եկեղեցական իշխանութեան յարատև շարունակութիւնը: Պաճառը առաջինի բազմաթիւ իշխանապետական բաժանումների և ժողովրդական ձայնի արհամարհութեան մէջն է, ինչ որ գոյութիւն չունէր եկեղեցական իշխանութեան մէջ: Եկեղեցական իշխանութիւնը՝ձևացնելով մի և միահեծան կառավարութիւն, շարունակ իր մէջ ընդունելով ժողովրդի արժանաւոր զաւակներին և բարձրացնելով նրանց մինչև հայրապետական աստիճանը, հպատակելով միայն մի՛ օրէնքի, ունէր իր մէջ զօրաւոր կազմակերպութիւն և յարապետութեան պայմանները:

Ահա այս ժողովրդասիրական ոգու պատճառով է որ Ծերենցի վէպերը լի են զուտ ժողովրդական տիպարներով, այսպէս Սարգիսն ու Բաբկէն՝ Թորոս Լևոնիի մէջ, Յովնանը՝ Երկունքի մէջ, Զաւէնը՝ Թէոդորոս Ռշտունիի մէջ: Սոքա երկրորդական անձեր չեն, այլ նոյն իսկ վէպերի հերոսները, որոնց գործունէութիւնը տեսնւում է սկզբից մինչև վերջ և առանց որոնց այս վէպերը կարելի էլ չէ երևակայել:

Երկրորդ գլխաւոր գիծը որ տեսնում ենք Ծերենցի վէպերի մէջ՝ կնոջ դերն է: Կինը մեր հին պատմութեան մէջ շատ քիչ է երևում. սրա պատճառը անշուշտ ոչ թէ միայն պատմագրերի արհամարհոտ լռութիւնն է, այլ նոյն իսկ կնոջ իրական անմասնակցութիւնը: Ծերենցը իր վէպերի մէջ շատ մեծ դեր է տալիս կանանց: Թորոս Լևոնիի մէջ Եւփիմէն, Մարգարիտը: Երկունքի մէջ Սեթան ու Քահինան՝ ամէն մէկը իր տեսակի մէջ ընտիր դրական տիպեր են. բոլորն էլ առհասարակ վարչական ընդունակութիւններով օժտուած, այնպէս որ նոյն իսկ Թէոդորոսը ասում է. «Մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պէտք է յանձնենք երկրին կառավարութիւնը, և միայն պատերազմով զբաղինք» (էջ 14):

Այստեղ հարց է ծագում թէ Ծերենցի վէպերը ինչ չափով հաւատարիմ են պատմութեան: Պէտք է խոստովանիլ որ Ծերենցը իսկապէս շատ հաւատարիմ է պատմութեան, ոչ միայն իր պատմած դէպքերը և նոցա յաջորդականութիւնը, այլ և շատ անգամ մանր հանգամանքներ կատարելապէս պատմական են: Պատմական են նաև բոլոր գլխաւոր տիպերը: Բայց որովհետև պատմական տուեալներ բաւական չեն մի կատարեալ վէպ դուրս բերելու համար, ուստի հեղինակը ստիպուել է իր երևակայութեամբ ստեղծել մի խումբ լրացուցիչ նոր դէմքեր, ինչպէս են Բաբկէն, Սարգիսը, և մանաւանդ կանացի տիպերը: Սրանք պատմական աստառի վրայ հակասութիւններ չեն ձևացնում: Ինչ վերաբերվում է բուն պատմական ոգուն, հարցը այստեղ փոխվում է: Այն գաղափարական գործունէութիւնը՝ որ հեղինակը տալիս է Յովնանին կամ Թէոդորոսին, իրապէս պատմական չէ: Սասնցոց յարձակումը Մուշի վրայ՝ պարզ վրիժառութիւն էր իրենց Բագարատ իշխանի համար, և ոչ թէ ընդհանուր Հայաստանի փրկութեան համար պատրաստուած ապստամբութիւն: Յովնանը այդ վրէժխնդիր տիրասէր լեռնականների պարզ մէկ առաձնորդն էր, բայց թէ նա ունէր այնպիսի ռամկավարական սկզբունքներ, որպիսին վերագրում է Ծերենցը, և թէ նա համակուած էր նախարարական կարգերի բարձումով մի ընդհանուր հայկական միութիւն յառաջ բերելու խոշոր գաղափարով, այս բոլորը Ծերենցի գիւտն

է: Պատմութիւնը մեզ չի տալիս այնպիսի երևոյնթներ, որով մենք կարողանայինք եզրակացնել թէ հայ ժողովուրդը երբ և իցէ գիտակցել է իր դրութեանը և կամ որևիցէ փորձ արել թօթափելու իր վրայ ծանրացող ազնուապետական լուծը: Գուցէ այդպիսի փոքրիկ ու անյաջող փորձեր եղած լինին, բայց մենք դրանց մասին տեղեկութիւն չունինք: Եւ քանի մեզ պակասում են այդ տեղեկութիւնները, պէտք է ընդունենք թէ հայ ժողովուրդն էլ, միւս արեւելեան ծանրաշարժ ժողովուրդների նման գիտէր համբերութեամբ և քրիստոնէական հեզութեամբ տանել իրեն վիճակուած ծանր կացութիւնը:

Այժմ անցնենք քննել Ծերենցի վէպերի առաւելութիւններն ու պակասութիւնները: Այդ վէպերի մեծագոյն արժանիքը հետաքրքրութիւնն է. հեղինակը գիտէ այնպէս վառ, կենդանի ու աշխոյժ ձևով պատմել, որ ընթերցողը լարուած ուշադրութեամբ լսում է նրան մինչև վերջ: Ուժեղ հայրենասիրութիւնը բոլոր վէպերի շղթան է հիւսում: Տիպերը նկարուած են միշտ զօրաւոր ու հատու գծերով. ամենագեղեցիկ յատկութիւնների, քաջութեան, տիրասիրութեան ու ազնւութեան հետ գտնում ենք նաև ամենամոլի յատկութիւններ: Համեմատել օրինակի համար քաջ ու քաղաքագէտ Թորոսը, բռնակալ արիւնարբու Սմբատը, նրա անբարոյական կինը, գթութեան հրեշտակ Մարգարիտը, օտարների մէջ սնուած, բայց իր հայրենիքը բնաւ չմոռացող Եւփիմէն, տիրասէր ու հաւատարիմ Սարգիսն ու Բաբկէնը, անվեհեր ժողովրդական Յովնանը, սիրոյ մէջ յաւիտեան հաւատարիմ Գուրգէնը, առաքինի Վասկանուշը, թուլամորթ յոյն Թովման, խորամանկ ու զուարճախօս ծառայ Վահրիճը, փողապաշտ Մարտիրոս վարդապետը, մատնիչ նախարարնեն են: Տիպերի նկարը երբեմն այնքան զօրանում է, որ հասնում է աւելորդ չափազանցութեան. օրինակի համար Յովնանին վերագրուած գերազանց յատկութիւնները նոյն իսկ իր պատանեկութեան ժամանակ: Անբնական է յոյն Դիոնիսի տիպը, որ Եւփիմէի գործակիցն է դառնում Պօլսից փախցնելու համար Թորոսին, կռուելու յոյն զօրքերի հետ, մինչև Կիլիկիա հասնելու և գրեթէ միշտ Թորոսի հետ ապրելու: Ո՞ր լաւ մարդը կարող է դաւաճանութիւնը հասցնել այն աստիճանի, որ միջոց տայ իր ազգին թշնամի ցեղ ամբողջապէս վերականգնելու, իր ազգակիցների բանակների խորտակումը անվրդով տեսնելու և իրենց տէրութեան տակ գտնուած մի ամբողջ երկիր բաժանելու: Դիոնիսի այս անորակելի վարմունքը բացատրած լինելու համար Ծերենցը ներկայացնում է նրան իբրև մի աշխարհաքաղաքացի ու չոր գիտուն, որ իբր թէ այս աշխարհքով չի հետաքրքրւում, բայց թէ որչափ անբաւական է այս բացատրութիւնը, ինքնին հասկանալի է: Անբնական է Եւփիմէի սէրը դէպի Թորոսը՝ միմիայն այն պատճառով որ նա չափազանց նման էր Ռուբէնին: Սիրոյ մէջ միայն դէմքի գծերն են դեր խաղում, հոգին, մարդու ներքինը, բարոյական արժանիքները ոչ մի նշանակութիւն չունին: Այդ ինչպիսի սէր է Եւփիմէի սէրը՝ որ իր առարկային կորցնելուց յետոյ քիչ էր մնում որ ենթակային էլ մահացնէր, բայց Թորոսի երևումով յանկարծ փոխադրւում է նրա վրայ: Աւելորդ տիպեր են Երկունքի մէջ Աշոտը և Զարուհին, որոնց միջադէպը սկսում և կիսատ մնում է: Տկար են բնութեան, տեղերի, հանդէսների, ուրախութեանց, նիստուկացի, վերջապէս առօրեայ կեանքի բոլոր երևոյթների նկարագրութիւնը: Ընդհակառակը շատ երկար, կեղծ ու բռնազբօսիկ է այն դատաստանը՝ որ վարում է Յովնանը երեք մատնիչ նախարարների դաւաճանութիւնը պատժելու համար: Այս դատաստանի մէջ գործ են դրուած կարելի է ասել, ներկայ եւրոպական դատավարութեանց բոլոր նրբութիւնները: Թոյլ է նոյնպէս Բուղայի տիպը: Բուղան այն գազաններից է, որոնց հասցրած աշխարհաւեր սարսափը մարդու մարմինն է փշաքաղում, բայց Ծերենցի տուած նկարագիրը այս գազանութեանց մասին՝ սովորական չափերից չի բարձրանում. մինչդեռ նա պէտք էր ստեղծէր

ահռելի, սարսռեցուցիչ նկարագրեր: Սրա հակառակ աւելի յաջող է յունական պալատական շրջանի, նոցա ապականեալ կեանքի, դաւադրութեանց ու կրօնական կռիւների նկարագիրը:

Կարելի է ասել թէ Ծերենցի վէպերը մի կատարեալ ամբողջութիւն չեն կազմում, այս կողմից ամենայաջողն է Թորոս Լևոնի, որ սկսւում է Թորոսով ու նրա մահով էլ վերջանում: Երկունքը իսկապէս Յովնանի վէպն է, թէ Սմբատի և Աշոտի: Հեղինակը «Երկունք» ասելով հասկանում է Թ. դարի այն շարժումը՝ որից ծնուեց Բագրատունեաց թագաւորութիւնը՝ խոհեմ ու քաղաքագէտ Աշոտի ջանքերով: Բայց գրքի մէջ Սմբատ ու մանաւանդ Աշոտ՝ որ այս երկունքի միակ հերոսներն են, շատ քիչ են երևում: Յատկապէս շատ անգոյն է Սմբատի տիպը. հեղինակը ոչ կարողացել է դուրս բերել նրան խոհեմ քաղաքագէտ և ոչ էլ դաւաճան կամ մատնիչ: Այս երկուսի մէջ տատանւում է շարունակ: Բոլոր գլխաւոր դերերը տուած է Յովնանին. Բագրատունեաց տէրութեան հաստատութեան համար հազիւ մի քանի տող կայ. հետևաբար և Երկունք վերնագիրը չի համապատասխանում նիւթին: Յովնանը մեռնում է, բայց վէպը դեռ բաւական շարունակւում է, որպէսզի Գուրգէն, Խոսրով և այլ մի քանի դուրսը մնացած անձեր իրենց դերը վերջացնեն: Այս հանգամանքը աչք է ծակում: Պէտք էր այնպէս դասաւորել իրերը՝ որ բոլոր երկրորդական տիպերը իրենց գործը վերջացնէին նախապէս և ամէնքի պսակը լինէր Յովնանի փառաւոր մահը: Սրա նման է նաև Թէոդորոս Ռշտունին. գիրքը սկսում է շատ գեղեցիկ էջերով. Վարդանաբերդի առումը, Բիւրեղ տիկնոջ և Նազենիկի անձնասպանութիւնը, Գրիգորի և Սուրէնի յուսահատ դիմադրութիւնը շատ գեղեցիկ էջեր են: Բայց այնհուհետև թուլանում է վէպը. դառնում է ռոման, և Թէոդորոսը՝ որ վէպի գլխաւոր հերոսն է, չկայ ու չկայ. հազիւ տեղ տեղ երևում է նա, իսկ նրա մեծ գաղափարի գործադրութեան համար յիշատակութիւններ միայն կան և ոչ թէ դէպքերի նկարագրութիւն: Առ հասարակ Ծերենցը չափազանց շատ պատմաբան է, այսպէս Թորոս Լևոնին սկսելով ռոմանի ձևով, յետոյ դառնում է իսկական պատմական վէպ, բայց այնուհետև զուտ պատմական դասագիրք է: Երկունքը աւելի յաջող է, իսկ Թէոդորոսը ամէնից շատ ունի զուտ պատմութեան դասագրքի կերպարանք:

Ծերենցի երեք վէպերից ամենաթոյլը Թէոդորոսն է. քննադատները ամէնից բարձր դնում են Թորոս Լևոնին, ի նկատի ունենալով նրա ամբողջականութիւնը. բայց եթէ այս հանգամանքը մի կողմ դնենք և նկատի ունենանք թէ ինչ է ստեղծել հեղինակը իր կողմից, այն ժամանակ առաջնութիւնը պէտք է տանք Երկունքին: Թորոսի ուրուագիծը արդէն բոլորովին պատրաստ է պատմութեան մէջ և Ծերենցը միայն գոյներ է դրած, իսկ Երկունքը մի շատ անորոշ ու տարտամ աստառ ունի պատմութեան մէջ, նրա մէջ շատ բան կայ, որ հեղինակը իր կողմից կազմել, դասաւորել ու ստեղծել է: Տեսարանների գեղեցկութեան կողմից էլ շատ յաջող է Երկունքը, ինչ ուժեղ պատկերներ են օրնակի համար Արաբ իշխանուհու ապարանքը, Գուրգէնի վիճակը՝ երբ նա լսում է իր սիրուհու ամուսնութիւնը և վերջապէս ամբողջ Ծերենցի ամենաբարձր տեսարանը՝ Յովնանի և Վասկանուշի տեսակցութիւնը (Գլուխ ԺԸ): Յուզիչ շատ յուզիչ է այս գլուխը, այնտեղ կը գտնենք սիրոյ այս անմեղ զոհերի դառն տառապանքը, անկեղծ սէր, սիրոյ հաւատարմութիւն պարտականութեան ձայնի հնազանդութիւնը, ուխտի նուիրականութեան գիտակցութիւնը: Այս բոլորը իրօք շատ հեռու է իրապաշտ նկարագրութիւններից և չափազանց իդէալական է, բայց միթէ գեղեցկութիւնը իրականութեան մէջ է միայն և իդէալը չունի աւելի հմայիչ, աւելի գրաւիչ, մարդու հոգին աւելի բարձրացնող յատկութիւն:

Ծերենցի լեզուն գեղեցիկ չէ, գրաբարի խառնուրդը բաւական շատ է նրանում. պակաս չեն նաև քերականական սխալներ, թերի կազմուած նախադասութիւններմ որոնցից երբեմն իմաստ

էլ չի դուրս գալիս: Թէև Ծերենցը իր կեանքի մեծ մասը Ռուսահայոց մէջ է անց կացրել, այնուամենայնիւ արևելեան հայերէնը նրա վրայ չէ ազդած: